

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ԳԷՈՐԳ ԱԹԸՆԻՋԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱԻ Ս. ՅԱԿՈԲԻ ԱՍՊԵՏ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Բարերար Գէորգ Աթընիզեան ծնած է Տիգրանակերտ, ուր անցուցած է իր մանկութեան և պատանեկութեան դժուարին օրերը: Օժտուած հայ մարդու ձեռներէց ոգիով և աշխատասիրութեամբ՝ ան յաղթահարած է կեանքի սկզբնական դժուարութիւններն ու խոչընդոտները և կրցած է հասնիլ բացառիկ յաջողութիւններու:

Գաղթած է Միացեալ Նահանգներ 1980 թուականին և անմիջապէս լծուած առեւտրական գործի: Այդ ճիւղին մէջ հետզհետէ յառաջդիմութիւններ արձանագրած է շնորհիւ իր բնածին տաղանդին և շարքաշ աշխատանքին: Իր աշխատանքէն քաղած ճոխ արդիւնքը միայն ինք իր անձին համար չէ սեփականացուցած, այլ առաջին օրէն իսկ՝ տոգորուած քրիստոնէական ոգիով՝ ուզած է ուրիշներ եւս բաժնեկից դարձնել իր արդար վաստակին: Սկսած է օգտակար ըլլալ հայ և օտար հաստատութիւններու և իր գաղութին մէջ ճանչուած է որպէս «բարեւար»:

Ամերիկաբնակ հայերու և ամերիկացիներու աչքէն աննկատ չէին կրնար անցնիլ անոր բարերարութիւնները, որոնց համար 2010 թուականին Պրն. Աթընիզեանին շնորհուեցաւ The Ellis Island Medal of Honor շքանշանը: Այդ պատուին կ'արժանանան Միացեալ Նահանգներ գաղթած անհատներ, որոնք կարելոր նպաստ բերած են և կը բերեն Ամերիկեան կեանքին: Իսկ 1998 թուականին՝ երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր սրբատառ կոնդակով շնորհած էր «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանը առ ի գնահատութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայց. Առաքելական եկեղեցիներու ի նպաստ անոր ըրած բարերարութեանց:

2000 թուականին երբ Պրն. Աթընիզեան կը գտնուէր Ս. Երուսաղէմ՝ կատարելու համար հայ քրիստոնէի իր պարտականութիւնը, պիտի այցելէր նաեւ Ս. Յակոբեանց վանքը: Սրբատեղեաց մէջ՝ ի տես հայոց վայելած լայն իրաւունքներուն, իր մէջ չերմ փափաք մը կը ծնի օգտակար ըլլալու հայ Երուսաղէմին և անսալով այդ ներքին զգացումին՝ ան նորոգել կու տայ Լուսարարապետարանը, պատմական հին և շքեղ շէնք մը, որ կը տիրապետէ վանքի մեծ բակին:

Թեմական մակարդակի վրայ եւս մեծ յարգանքի արժանացած է Պրն. Գէորգ Աթընիզեան: Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի 106-րդ Պատգամաւորական Ժողովը՝ գումարուած 2008-ին ի Պէյսայտ, Լոնկ Այլընտ, «Տարուայ Մարդ» հռչակեց Աթընիզեան եղբայրները առ ի գնահատութիւն անոնց կողմէ Առաջնորդարանին եղած շօշափելի նուիրատուութեանց:

Պրն. Գէորգ Աթընիզեան կարելոր նուիրատուութիւն ըրած է նաեւ Մեծագոյն Պոստոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ: Այլ եկեղեցական հաստատութեանց կարգին նիւթապէս օգնած է նաեւ մերձակայ Ուոթըրթաուն քաղաքի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ, իսկ 2011 թուականին օժանդակած է իր ծննդավայր՝ Տիգրանակերտ քաղաքի Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքներուն ի նպաստ կատարուած հանգանակութեան:

Կարելոր է յիշել Պրն. Գէորգ Աթընիզեանի բարերարութիւններէն ոմանք Հայաս-

տանի Հանրապետության սահմաններէն ներս: Աթընիզեան եղբայրներ, այլոց հետ, բաժնետէրն են Երեւանի Ազատութեան Հրապարակի վրայ գտնուող Marriott Hotel-ին, նախկին Արմենիա Հիւրանոց: Այդ կապը առիթ կը ստեղծէ որպէս զի Պրն. Աթընիզեան յաճախ հայրենիք երթայ և որոշ ժամանակով մնայ հոն: Հայաստանի մէջ իր կատարած բազմաթիւ իրազործումներէն մէկը եղած է հայ շինականներուն գործ և միջոցներ հայթայթել՝ ապրուստ ապահովելու նպատակով:

Հայրենիքէն դուրս՝ Պրն. Աթընիզեան անդամակցած է այլեւայլ հայ և ոչ հայ կազմակերպութեանց և օգտակար հանդիսացած անոնց: Երկարամեայ անդամ է Մեծագոյն Պոստոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ, որուն ծխական խորհուրդին վրայ ծառայած է անցեալին՝ երկու շրջանով: Գործօն մասնակցութիւն ունեցած է Առաջնորդարանի Հայ Օգնութեան Ֆոնտին: Օգնած է Պոլսոյ Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին և Պոստոնի հայկական ծերանոցին: Այլեւայլ առիթներով օգտակար եղած է Պոլսոյ Պատրիարքարանին:

2000 թուականի Նոյեմբերին՝ Պրն. Աթընիզեան այլ արժանաւոր հայորդիներու հետ միասին մաս կազմած է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շքախումբին՝ Վեհափառ Հայրապետի Վատիկան այցելութեան առիթով և ներկայ գտնուած՝ Հայոց Հայրապետին և Հռոմի Յովհաննէս Պօղոս Բ. Պապին պատմական տեսակցութեան:

Իսկ 2017 թուականի 29 Դեկտեմբերին՝ Երուսաղէմի հայ Պատրիարք Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Մեծագոյն Պոստոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ պատուեց Պրն. Գէորգ Աթընիզեանը «Արքոյ Յակոբեանց Ասպետ» խաչաձեւ ադամանդակուռ շքանշանով:

Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ, թէ ինչպէս ժամանակին Գանատական թերթ մը մրցոյթ մը յայտարարած էր «Բարեկամ» բառին լաւագոյն սահմանումին: Զանազան պատասխաններու մէջէն թերթին խմբագրութիւնը ընտրած էր հետեւեալը՝ իբր լաւագոյն մեկնաբանութիւնը «Բարեկամ» բառին. «Իրա՛ւ Բարեկամը այն է՝ որ ներս կը մտնէ մեր կեանքէն երբ ամբողջ աշխարհը դուրս եկած է անկէ»՝ շէշտելով այն պարագան, որ Պրն. Աթընիզեան ինքնաբերաբար կերպով ըրած է իր նուիրատուութիւնները: Եւ ատոր համար էր, որ Սուրբ Աթոռը գնահատեց զինք և իրեն շնորհեց «Արքոյ Յակոբեանց Ասպետ» շքանշանը, որով ան հանդիսացաւ առաջինը այդ ասպետներուն:

